

## **Հաճախորդի համաձայնությունը**

### **Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը առ այն, որ**

- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից, առանց ինձ տեղեկացնելու, հարցումներ կատարվեն «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին, այլ վարկային բյուրոներին, ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին և վերջիններիս խնդրում եմ Բանկին տրամադրել համապատասխանաբար իմ՝ որպես վարկառուի/ն կազմակերպության միակ հիմնադրի/տնօրենի ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ֆինանսական տվյալներ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք կարող են առնչվել ինձ հետ համապատասխան վարկային (փոխառություն և այլն) և այլ պայմանագրեր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս, ինչպես նաև վարկային (փոխառության և այլն) և այլ պայմանագրեր կնքելու դեպքում տվյալ պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած պահի Բանկը ստանա իմ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ֆինանսական տվյալներ, ինչպես նաև այլ տվյալներ:
- **Բանկը ցանկացած պահի հարցումներ կատարի ՀՀ օրենսդրությամբ սահմանված Հանրային բազաներին, և բանկային սպասարկման ոլորտում հաճախորդների վերաբերյալ տվյալներ մշակող այլ անձանց, և ստանա կազմակերպության և/կամ իմ վերաբերյալ տեղեկատվություն (այդ թվում՝ անձնական տվյալներ), իսկ վերոնշյալ իրավասու մարմիններին խնդրում եմ, հարցմանն ի պատասխան, ցանկացած հարցվող տվյալ (այդ թվում՝ անձնական) փոխանցել Բանկին, որոնք Բանկի կողմից մշակվելու են ինձ հասցեագրված ծանուցմամբ (այսուհետ՝ Ծանուցում) նկարագրված կարգով և ժամկետներում, որը հասանելի է <https://www.conversebank.am/Notice.pdf> կայքում և Բանկի տարածքում:**

- Կազմակերպության և/կամ իմ անձնական տվյալները Բանկի կողմից փոխանցվեն «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ, ՀՀ Կենտրոնական բանկ, Բանկի հետ համագործակցող այլ վարկային բյուրոների և բանկային սպասարկման ոլորտում հաճախորդների վերաբերյալ տվյալներ մշակող այլ անձանց:

Սքորինգային (առցանց) համակարգով հաստատված հայտի առկայությունը դեռևս չի համարվում Բանկի կողմից վարկի տրամադրման վերջնական որոշում, և Բանկն իրավունք ունի Հաճախորդի վարկունակության վերաբերյալ լրացուցիչ պարզաբանումներ իրականացնել, որի դեպքում վարկի տրամադրման վերջնական որոշումն ընդունվում է Բանկի կողմից, ինչի մասին Հաճախորդը ծանուցվում է:

Հաճախորդը հավաստիացնում է, որ տեղեկացված է, որ կրում է պատասխանատվություն սույն հարթակում/անձնական էջում լրացված տվյալների, տրամադրված տեղեկատվության, կատարված գործողությունների և դրանց հետևանքների համար:

Հաճախորդը հավաստիացնում է, որ սույն հարթակում/անձնական էջում կատարված գործողությունները արտահայտում են վերջինիս կամքը:

Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից իր տվյալները, այդ թվում՝ անձնական, օգտագործվող գաղտնաբառերը, այլ տվյալները, տեղեկատվությունը այլ/երրորդ անձանց հասանելի դարձնելու հետևանքով Հաճախորդի կրած վնասների համար:

Բանկը պատասխանատվություն չի կրում սույն հարթակի շրջանակներում Հաճախորդի կատարված գործողությունների և դրանք հետևանքների համար:

**Հավաստում եմ, որ կարդացել եմ համաձայնությունը, ծանոթացել եմ Ծանուցմանը, որոնք ինձ համար ամբողջությամբ հասկանալի են և ընդունելի:**